

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Հերկայ 1897 տարեկանի
Պոլիկարիոյ համար տարեկան 10ֆր
" " 1/2 " 5 "
Արտասահմանի համար " 12 "
" " 1/2 " 6 "
Կանխիկ վճարելի

Համակ դրամ եռայն խրկել հետեւեալ հասցեով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈԼԻԿԱՐԻՍ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
ետ չեն դրկուիր եւ յարմար դատ-
ոշաններն միայն կը հրատարակ-
ուին ամբողջովին կամ մասամբ:
Ծանոցմանց տողը 20 տալիսիւ.
Երեքէն աւելի անգամներու համար
20 առ 100 գեղջ կը լինի:

ԽՈՐՀՈՒՐԴ ՍԸ

Իրերու բնական ընթացքը եւ
փորձառութիւնը մեր մէջ ներմու-
ծեցին նոր տեսակներու մը հայկա-
կան խնդրին մասին: Ինչպէս չա-
նազան կողմերէ մեզ հաղորդուած
զրաւոր եւ բերանացի տեղեկու-
թիւններ կը ցուցնեն, հայ ժողո-
վըրդի մէջ սկսած է ընդհանրանալ
սա համոզումը թէ հայկական խնդ-
րին մէկ բարեօք լուծումը հարկ է
ակնկալել, միմիայն կամ գոնէ ա-
մենէն առաջ Ռուսիայէն, որ իր
պատմական պաշտօնին եւ հայաս-
տանի աշխարհագրական դիրքին
բերամբ մեր միակ ու բնական
պաշտպանն է: Ռուսաստանը հոսանք
մը գոյացած է, որ կընթանայ, կը
մտնէ ժողովրդին ամէն խաւերուն
մէջ եւ ըստ երեւոյթին՝ պիտի ու-
ղողէ համայն հայութիւնը:

Քանի մը բարեկամներ մեզ դի-
մած են հարցնելու թէ օգտակար
չէ՞ր ըլլար ժողովրդային ուսուսէր
տրամադրութեանց իբր արտաքին
յայտարար նշան միջոցներ խորհիլ
Եւրոպայի մէջ պատգամաւորու-
թիւն մը կազմակերպելու որուն
պաշտօն յանձնուէր հայ ժողովրդի
զգացումները եւ ցաւերը ներկայա-
ցընել Չարին մարդասէր ու բարե-
հաճ նկատառութեան:

Մեր կարծիքով աշխարհի ձեռ-
նարկ մը կրնայ արգիւնաւոր ըլլալ
եթէ ոչ անմիջական կերպով, գէթ
ապագային համար իբր սկիզբա-
ւորութիւն մը մ'ը դիմումներուն
առ Ռուսիա: Սակայն մեր այս
առաջին դիմումին օգտակարու-
թիւնը կախում ունի պատգամա-
ւորութեան ընտրութեան պայման-
ներէն: Ընտրութեան մասնակցելու
են Եւրոպայի բոլոր հայաբնակ
քաղաքներ եւ եթէ կարելի է նաեւ
Պարսկաստանի եւ Հնդկաստանի
հայեր: Թուրքիոյ հայեր բնակա-
բար չեն կարող մասնակցիլ, իսկ
Ռուսահայերը պէտք է որոնցպէս
ձեռնադրան մնան: Այսպէս՝ ձեռ-
նարկը ըլլալու է այդ երկիրներու
մէջ բնակող հայ ժողովրդի զգա-
ցումներուն մէկ անկեղծ, ազատ,
ինքնաբեր ու միահամուռ արտա-

յայտութիւնը: Այս պայմանով
միայն կարելի է յուսալ որ Չարին
սրտին ձայնին հետ ուսու քաղա-
քականութեան հաշիւներն ալ հա-
մաձայնին մեզ ինչպիսի:

Նաեւ պատգամաւորութիւնը
կազմուելու է որքան կարելի է
ազգին մէջ ժողովրդականութիւն
եւ հեղինակութիւն վայելող, Եւրո-
պայի քաղաքական բարձրագոյն
ընթացիկներու ծանօթ հայ անձ-
նաւորութիւններէ եւ ամէն պարա-
գայի մէջ անոնց գործակցութեամբ
ու խորհրդով:

Դիմումին նպատակը՝ հարկ չկայ
ըսելու թէ ուրիշ բան չի կրնար
ըլլալ, այլ միայն խոնարհաբար
խնդրել արեւելքի քրիստոնէից
Պաշտպանէն որ բարեհաճի՝ ընդու-
նելով հայ ժողովրդին եւ ամենա-
խորին յարգանքին եւ անձնութեան
թիւն առհասարակեան, իր բարձր
հովանաւորութիւնը տարածել թըր-
քահայերուն վրայ, որով միայն
անոնք պիտի կրնան վայելիլ կեան-
քի, պատուի եւ ինչքի իրական ա-
պահովութիւն:

Յոռեւտաններ եւ անգլիասէրներ
պիտի առարկեն անշուշտ թէ այսօ-
րինակ ձեռնարկ մը քաղաքական
ներկայ հանգամանքներու մէջ բո-
լորովին անօգուտ է եւ թէ հայերս
չենք կրնար գոնէ առայժմ բան
մը սպասել Ռուսիայէն որուն քա-
ղաքականութիւնը քանի մը տարի
է ի վեր այնքան թրքասէր դոյն
մը առած է:

Կը պատասխանենք.
Եթէ դիմումը իրական, շօշա-
փելի օգուտ մը չընծայէ, գոնէ
նպատակայարմար միջոց մըն է
Ռուսիոյ պղատոնական, լուիկ հա-
մակրութիւնը եւ աշխարհի ուշա-
գրութիւնը մեր վրայ հրաւիրելու:
Այդ չափն ալ շահ մըն է, զոր
ձեռք բերելու համար կարծէ պատ-
գամաւորութիւն մը կազմել: Եթէ
կընդունինք որ ազգին այն մեծ
մասն ալ որ յիշափոխական գոր-
ծերու մէջ մասնակցութիւն չունի,
պարտական է շարժիլ, միջոցներ
խորհիլ թրքահայութեան վերջե-
րուն վրայ սպեղանի մը դնելու,
եթէ կընդունինք, որ այդ միջոց-
ներէն են մեր դիմումներն առ որ

անկ է, եւ թէ հարկաւոր է մեզ
այսուհետեւ դիմել մասնաւորապէս
ուսումնական պաշտպանութեան պէտք
է ընդունիլ նաեւ որ այս տողե-
րուն առարկայ եղող խնդրին ալ
արժանի է ամէն հայու խորին ու-
շագրութեան, մասնաւոր անոնց
որոնք իրենց դիրքով ու փորձա-
ռութեամբ կոչուած են վճռական
ձայն մը ունենալ այս պարագային
մէջ:

ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Միեւնոյն գաղափարի կամ խնդ-
րոյ մասին զանազան անձերու
տարբեր ըմբռնումները կը կազմեն
անոնց անձնական կարծիքը:

Մարդու մը անձնական կարծի-
քը մօծ կարեւորութիւն ունի, ու-
րովհետեւ ա՛յն է որ կը ներշնչէ
գաղափարին իրագործման համար
ձեռք առնուելիք միջոցներուն տե-
սակը:

Հետեւաբար սխալ կարծիքը,
այսինքն խնդրոյն թիւր ըմբռնումը
անյաջող ելքի մը եւ ձախողութեան
ներու միայն կրնայ առաջնոր-
դել:

Ինչէ՞ն է որ միեւնոյն խնդրոյն
վրայ մարդիկ տարբեր կարծիք-
ներ կ'ունենան:

Ասոր պատճառները անշուշտ
բազմաթիւ են. ինչպէս՝ տարիքը,
խառնութեան, սեռը, դաստիա-
րակութիւնը, որոնք բնական սա-
տարներ են, եւ միւս կողմէն՝ անձ-
նական շահը, փառասիրական ձգ-
տումները, անձնասիրութիւնը,
յամառութիւնը, որոնք ստացական
են եւ որոնցմով պիտի չի զբաղինք:

Տարակոյս չիկայ թէ ամեն մարդ
իր անկեղծ վիճակին մէջ իր անձ-
նական կարծիքը կրնայ ունենալ,
այսինքն յստակ ըմբռնում մը որ
համարտութիւնն ինչ եղած ըլլայ:

Միայն թէ այս իրողութիւնը
բացարձակ չէ, այլ խնդրոյն տե-
սակին եւ անձին մտաւորական կա-
րողութեանը հետ ուղիղ կերպով
կը համեմատի:

Ու եւ ինչորոյ վրայ անձնական
կարծիք ունենալու համար, պէտք

է ձեռնհաս ըլլալ այդ խնդրոյն
մէջ. կարծիքը այնպիսի զանգուած
մըն է որ հարկաւոր պարագա-
ներու եւ մանրամասնութիւններու
մասնակցութիւնով կը կազմուի.
Ինչպէս բժշկական հեղուկ մը, որ
քանի մը տեսակ դեղերու զտու-
մէն կը ստեղծուի, եւ որոնցմէ
միոյն բացակայութիւնը անոր ամ-
բողջ ուժը կը ջլատէ:

Անձնական կարծիք ունենալ յա-
ւակնելու համար, խնդրոյն բոլոր
մանրամասնութեանց եւ պարագա-
յից տեղեակ ըլլալը անհրաժեշտ է:

«Այո»ներ կամ «ոչ»եր կան՝
զորս արտասանելու համար տասն-
եակ տարիներու փորձառութիւն եւ
երկարատեւ խուզարկութիւններ եւ
ուսումնասիրութիւններ կը պահան-
ջուին:

Տեղեւոյս անձկութիւնը չի թոյ-
լատեր որ օրինակներով խօսինք,
ինչ որ լաւագոյն դրութիւնն է,
եւ սակայն, ամեն ոք քիչ մը մտա-
ծելով եւ քիչ մըն ալ անձնական
փորձառութեամբ դիւրաւ կրնայ
գտնալ զանոնք:

Վերը ըսած էինք թէ ամէն
անհատ կարող է ձեռնհաս սեպ-
ուիլ անձնական կարծիք ունենա-
լու իր ամենէն անմիջական զբաղ-
մանց առարկայ եղող խնդրոյ մէջ.
այսպէս, յետին դերձակին կար-
ծիքը աւելի ընդունելի է Պիզմարք
իշխանին կարծիքէն, երբ խնդիրը
ամենէն շուտ եղանակով դերձանը
տեսլին ծակէն անցընելու վրայ
է. բայց երբեք կոշկալարը քըն-
նադատելու չէ նկարի մը այն մա-
սերը որ կոշիկէն վեր կը բարձ-
րանան:

Հարցուցէք մէկուն թէ ի՞նչ կը
մտածէ յառաջիկայ Անգլո-Ռու-
սական պատերազմին ելքին վրայ.
Իսկոյն պիտի պատասխանէ ձեզ
թէ իր անձնական կարծիքովը,
Ռուսիան է որ յաղթութեան դրոշմ
պիտի պարզէ. ուրիշներուն ալ՝
Ալպիոնի դաւաճներն են որ դափ-
նինքով պիտի պարգարուին: Կան՝
որոնց անձնական կարծիքն է թէ
մեզմ' ձմեռ մը պիտի ունենանք եւ
կան ալ որոնք այժմէն ամենէն
կծու քամիներուն կը դատապար-
տեն մեզի:

Այս տեսակ յաւակնոտութիւնները թէեւ յոյժ ծաղրելի այլ անշնորհ են. միայն զանոնք արտայայտող ուղեղներու անօտու թիւնը կ'ենթադրեն և մազի չափ չեն կրնար շեղեցնել իրերու բնական ընթացքը: Անշնորհ են նաեւ այն ոտնձգութիւնները զոր տարբեր առարկաներու մասնագէտները կրնան իրարու տարրին մէջ պարզապէս մարդկային անախտութեան ցոյց մըն է ըրածնին:

Սակայն այնպիսի խնդիրներ ալ կան որոնք ընդհանուր կը վերաբերին և ազդեցութիւն ունին ամենուն ճակատագրին վրայ, այսինքն այն խնդիրները որոնք ընդհանուր բարեկեցութիւնը կը շօշափեն:

Ֆրանսական մեծ Յեղափոխութիւնը աշխարհի դրութիւնը վերի վայր չըջեց: Ոչ միայն Ֆրանսացւոց այլ և բովանդակ քաղաքակրթեալ աշխարհի անհատներուն ինքնաճանաչութեան և ինքնավարութեան իրաւունքը ներշնչեց: Փրկեց աշխարհը յիսար ինքնակաշնորհ ձեռքը խաղալի դառնալէ և ամենուն ձայն տուաւ երկրին կառավարութեան գործին մէջ:

Այս իրաւունքը տգէտ ժողովուրդի մը ձեռքերուն մէջ վտանգաւոր կրնար դառնալ. արդարեւ ձայն մը, ինչպէս ըսինք, պէտք էր բազում հմտութիւններու վրայ հիմնուած համոզման մը արտայայտութիւնը ըլլալ: Ուստի պէտք եղածին չափ դարմանեցին այս վտանգը, կրթութիւնը տարածելով և նոյն իսկ պարտաւորիչ ընելով զայն:

Արդարեւ միամիտ անձ մը միշտ զոհը կըլլայ անձնական հաշիւներ ունեցող և մտաւորական աւելի բարձր կարողութիւն վայելողի մը ձեռքերուն մէջ:

Լրագիր մը, կամ ուրիշ գրութիւն մը կրնայ ամենէն ազգայնապաշտպանութիւնը տալ ամբողջ ամբողջի մը որ գնահատելու ընդունակութիւն չունի և խորհրդածութեան մը տկար կողմերը նըշմարելու կարողութիւն չունի:

Տգէտը միշտ վերջին լսածին կամ կարգադրածին տպաւորութիւնը կը կրէ և իր յեղեղով ուղեղը շատ քիչ անգամ կը յաջողի կանգ առնել ճշմարտին և օգտակարին առջեւ:

Պարզապէս խաղալի մը, մարդկային գնդակ մը որ կը ոստոստէ երկու և երեքմէն նոյն իսկ աւելի հակառակ ուժերու մէջ տեղ:

Տարակոյս չի կայ թէ անձնական կարծիքէ զրկուելը, կարծիքէն որ նոյն իսկ մարդն է, վերաբերիչ բան մը ունի իր մէջ, և այս իսկ ըլլալու է պատճառը որ ամեն մահկանացու կը փութայ վճռել՝ «այո՛, պէտք է», պահ մը ետքը «ո՛չ, պէտք չէ» պոռալու համար:

Անշուշտ, այս գրութեամբ,

հանրութիւն մը միայն ինքզինքին փնտրելու ջանացած կըլլայ:

Հետեւաբար այն որ տգէտ ըլլալու դժբախտութիւնը ունի, ո՛չ թէ միայն անձնական ինքնուրոյն գաղափար չի կրնար ունենալ, այլ նաեւ տարբեր կարծիքներու մէջէն լաւագոյն ընտրութիւնը ընելու ալ անկարող կըլլայ. և այս՝ մինչեւ այն օրը ուր տքնութիւններով, աշխատութեամբ և հետաքրքրութիւնով իր միտքը նրբացնէ, մարդէ որպէս զի անճարտար որսորդի մը պէս օգին մէջէն սլացող հոլաթեւ ճշմարտութիւնը որսայ, իւրացնէ:

Եզրակացնելու համար պէտք է յարենք թէ կարգահատինք բոլոր այն անձներուն վրայ որոնք իրենց «անձնական կարծիք»ով կը պարծենան և զայն կը փռեն ալ և ահեակ, համոզուած ըլլալով թէ աշխարհի մէջ չստ սակաւաթիւ են իրապէս անձնական կարծիք ունեցողները:

Ասոնք մատի վրայ կը համրուին, միլիոններն ասոնց հետեւողներն են: Միայն սա տարբերութիւնը կայ սր զարգացեալ միտք մը շատ քիչ անգամ յոռի ընտրութիւն մը կրնէ, ինչ որ ամենէն էականն է, իսկ տգէտը կոյր գործիք կը դառնայ փառքը իր բախտախնդիրներու և այս պէտքով ակամայ փնտրակար տարր մը կը դառնայ:

Թողլով գիտունը իր լոյսերուն, դառնանք երկրորդ դասակարգին որ ամենէն շահեկանն է:

Ի՞նչ պէտք է ընէ տգէտը. պէտք է ձեռնպահ մնայ իր չի հասկցած խնդրին մէջ. անշուշտ ոչ. որովհետեւ այս ի փնտ Գլխաւորութեան եղած կըլլայ:

Ուրե՛մն.

Ով որ ենթակայ է ուրիշի մը կարծիքը սեփականելու, անոր պէս մտածելու և գործելու, պարտաւոր է իր ընտրութիւնը ընել նկատի ունենալով գաղափարէն աւելի անոր ազդեցութիւնը:

Տեսնենք թէ այդ ազդեցութիւնը թէ թունաւոր ջուր կրնայ հոսեցնել:

Քննենք մեզ ներշնչողին անցեալը, ներկան, անոր ապրած շրջանակը և յարաբերութիւնները. ուշադիր ըլլալով թէ որո՞նք են անոր համակրողները. թէ ի՞նչ է անոնց բարոյական և մտաւորական կացութիւնը. վերջապէս անոնց գիրքը և վայելած համարումը աչքի առջեւ բերենք:

Եւ այն ատեն, եթէ կարծիք մը իւրացնենք և զայն ընենք մեր «անձնական կարծիքը», մեծ հաւանականութիւն կ'ունենանք թէ չենք սխալած, և սխալելով փնտսակար չենք դորձած յոռին քաշալերով ի փնտ ճշմարտութեան:

Եւ այս՝ որքան տարրական նոյնքան ալ գործնական միջոցը, ո՛չ հմտութիւն և ոչ ալ փորձառութիւն

թիւն կը պահանջէ, այլ միայն քիչ մը ուղիւստութիւն, բան մը որ ձրիաբար տրուած է բնութենէն մարդկային ամեն արեւմտի:

Գաւեր-Արշալիր

ԱՆՀԱՒԱՏԱԼԻ ՅԱՒԱԿՆ ՈՒԹԻՒՆ Մ'Ը

— — —

(Շար. նախ. քիչէն եւ վերջ)

Շատեր գիտեն չափն այն իրական ընդունելութեան զոր կատարել գտաւ հայ հասարակութեան և որ անոր խմբագրութեան համար ազդալարութիւն մըն էր թէ Ժ. Ղովուրդը ալ զոռած էր թերթերու և թուոցիկներու մէջ հայհոյութիւն և պոռոտաբանութիւններ կարգալէ: Այն գնահատելի համակրութիւնը, զոր ազգը ըրր թէ ցոյց տուեր է թերթին՝ գրուած է միայն թղթի վրայ, Տաշրուսի՝ կատարելի յաջողութիւնը այդ նոր լրագրին յայտարարութեան և քանի մը անձերու նամակներուն մէջ, որոնք պարզմտորէն շլացած կամ զանազան անձնական շարժառիթներէ թելագրուած՝ փութացեր են իրենց համակրութիւնը գրաւորապէս յայտնել կատարելի:

Ճշմարտութիւնը սա է որ ընդունելութիւն չի գտաւ, կամ որ նոյնն է, խղճալի էր իր գտած ընդունելութեան աստիճանը: Բայց անոր ուղղութիւնը փոխել չէր ըլլար, որովհետեւ նոյն ուղղութեամբ միայն խմբագրութիւնը կը յուսար իր նպատակին հասնիլ, որ էր, կը կրկնեմ, հակայեղափոխական փոքր կուսակցութիւն մը առաջ բերել, խումբ մը, որ կատարելի շուրջը բոլորուէր՝ 1,000,000 ռուբլի հաւաքելով թուրքիոյ հայութիւնը օսմ: կառավարութեան դէմ՝ միահամուռ ստի հանելու նպատակով:

Այս հակայ ծրագիրը որքան հրապուրիչ էր շատ բարակ մտածելու չըմարտնշած մտքերու համար: Լրջամիտ մարդիկ միայն կրնային խորհիլ որ ընդհանուր ապստամբութեան մը ծրագրին գործադրութիւնը, ներկայ հանգամանքներու մէջ, անկարելիութեան մօտ աստիճան դժուարացած է, վասն զի անօթութիւնը, մերկութիւնը և անոնցմէ յառաջացած հիւանդութիւնները՝ գաղթականութեան հոսանքը և կրօնափոխութիւնը այնքան նիւթապէս և բարոյապէս պիտի տկարացնէ Հայաստանի հայ տարրը որ չպիտի կողու անոր ազատ շունչ մը առնել և իր օրական ապրուստը ճարելու հոգէն տարբեր մտածումներ ունենալ. ուր կը մնայ զինուիլ, կանոնաւորապէս կազմակերպուիլ ու ապստամբիլ, այն ալ կառավարական ար-

դի սարսափներուն և հալածանքներուն ու ստիկանական ամենախիստ հակոյութեան մէջտեղ:

Ու այս ամէն հապաքին դժուարութիւնները պիտի յաղթահարուին չէթէ ամէն կուսակցութեանց, ամբողջ ազգին ամէն դասակարգերուն միահամուռ ճիգերուն և զոհողութեանց, այլ այն գորութեան առջեւ, որ ազգին մէջ պիտի ծնի Էրաստակի հրաշագործ հայհոյութիւններէն, անէծքներէն ու լուսանքներէն:

Եթէ ասոր չէք հաւատար, կարգացէք կատարել ու պիտի տարհամնալիք. ան արդէն վերաբուժական գործողութիւն մը կատարած է եղբր ազգին հիւանդ մարմնին վրայ և հաստատած է եղբր ազգին բարոյական կենդանութիւնը, որ կերաշխաւորէ փրկարար թերթին ամէն դիտաւորութեանց իրականացումը: Իսկ եթէ այդ վերաբուժական գործողութեան ալ չէք հաւատար, ընթերցողներ, ինձ հետ համաձայնեցէք զայն նկատելու, ինչ որ անուանած եմ յօդուածիս խորագիրով:

ԱՆԿՈՒՍ

— — —

Բ.

Պուկարիոյ վերածնութիւնը անհամար առաւելութիւններ, անսպասելի առանձնաշնորհումներ բերաւ ոչ միայն Պուկար ժողովուրդին, որ ուղղակի աստուծոյ օգտուելու կոչուած էր, հապա նաեւ միւս բոլոր քրիստոնեայ տարրերուն ուրիշ կը հեծէին թուրք տիրապետութեան անդամալուծող կաշկանդութիւն ներքեւ և որոնց մէջ բաւական կարեւոր դերք մը կը զբաւէր հայը թէ՛ նիւթապէս թէ՛ բարոյապէս:

Երկրի մը ազատագրումէն կը բխի ժողովրդեան բարեբերուն և սովորյալներուն ազատագրումը տգիտութեան խաւերէն:

Աւելորդ է հոս դասաւորել բոլոր այն առաւելութիւնները զորս Պուկարիա ունեցաւ իր վրայ բացուած պարզ, հանգարա, երանաբեր հորիզոնին տակ, Պալքանի այս փրկ Սլուները ըմբռնեցին իրենց ճակատագրին կրած անակնկալ փոփոխութիւնը, ու փութացին օգտուիլ անկեղծ: Ան ճամբան զոր հարկեցին յարգաբեցին զարգացման հովիտն հասնելու համար, առաջանալու վրայ է միշտ:

Պուկարահայերը երթարկուեցան ճակատագրի միւլենոյն յիշաշրջման: Իրենց վրայ իշխողը այլ եւս Մուհամմէտի արիւնտ մահիկը չէր, ոչ ալ հարստահարութեան սեւ ուրուականը. քրիստոնէի հովանաւորութիւնն էր:

անկաշկանդ ու ներողամիտ . ա՛լ գոյութիւն չունէր ան միջոցաբար որ յառաջդիմութեան ու զարգացման հիմքերը կը կրծէ կը փլցունէ :

Ժողովուրդ մը որ կապրի սաստանայական լեծիւմի մը ներքեւ , միշտ իրաւունք կունենայ արդաւորելու իր յետադիմութիւնը յառաջդիմութեան այսպիսի դարձման վրայ : Պուկարահայն այս արդարացուցիչ գերազանց պատճառը ունէր երբ օսով . գրօշը կը ծածանէր Պալքաններու բարձրաւանդակին վրայ : Այս բառմանը դրօշը միանգամ ընդ միշտ անհետացած է տարիներէ ի վեր :

Պուկարահայն , թուրք վարչութեան ներքեւ , բոլոր իր դէմ ունէր զարգանալու պայմանները : Բայց երբ քրիստոնէայ կառավարութիւն մը , որ սահմանադրութիւն ունի և ազատ մտածող , կուգայ , յանկարծ այդ պայմաններուն այնպիսի գոյն մը տալ որ լիովին նպաստաւոր է , ինչ կը մնար ընել Պուկարահայն : Այն ինչ որ չէր րոտ գծախտաբար :

Նախորդ յօդուածով ըսինք թէ բնիկ հայ տարրը իր ափին մէջ ունի ամէն նպաստաւոր պայմաններ զարգանալու :

Թուենք այս պայմաններէն մէկ քանին :

Հանդարտ և անվախ կենսավարութիւն :

Գործելու , շարժելու , խօսելու ազատութիւն :

Երկրին զանազան օտար տարբերուն մէջ զբաղուած գիրքի կարեւորութիւն :

Ազգային կարգ մը իրաւունքներու թողտուութիւն :

Դիւրութիւններ՝ օգտուելու տիրող տարրին վարչական գրութեան , կրթական հաստատութիւններէն , դիւրութիւններ՝ ի մասին քաղաքային ու գիւղատեղական պաշտօններու մէջ գիրքէր գրաւելու :

Այսչափին իսկ բաւ է արդէն հաստատուելու համար որ Պուկարիոյ հայ տարրը չէ ուզած կամ չէ գիտցած օգտուիլ իրեն ներկայացած այս բազմադիմի առաւելութիւններէն :

Թերեւս առարկուի թէ նիւթական տեսակէտով այս երկրին մէջ հայը չէ կարող ստեղծել այն իտէալ գիրքը , զոր արդէն իսկ ունեցած ըլլալու էր : Այս առարկութիւն ինքնին կը ջրուի երբ ընդունինք որ երկիրը իր այժմու գրութեամբն ու ընծայած գիրութիւններովը ունի անանկ միջոցներ որոնցմով մարդ կը յաջողի քիչ շատ նիւթական գիրք մը յօրինել իրեն , մասնաւորապէս թէ օգտուի մեր վերեւ յիշած բաւոյական առաւելութիւններէն :

Եւ պատճառաբանութեանց բընական կարգով , դարձեալ պիտի դառնանք յանգինք կրթական

գործին , որ այնքան թոյլ կերպով ըմբռնուած է և որ այնքան լքուած վիճակի մը մէջ կը գըտնուի :

Եւ կրթութեան այս դարձը իր բազմապիսի աստիճանին հասցնելու համար չի կարծուի թէ նիւթական մեծ գոհողութիւններ հարկ են : Մեր վարժարաններու ծրագրի մասին մտայն , բարեփոխարգրութիւն մը էն հզօր միջոցը պիտի ըլլայ գրական արդիւնքներ ձեռք բերելու : Պուկարիոյ հայ վարժարաններ ընդհանրապէս այսօր չունին այնպիսին կանոնաւոր ծրագիր մը որ համապատասխանէ պոլիւար երկրորդական կրթութիւն տուող վարժարանի մը ծրագրին : Ծխական հայ վարժարանէ ուսումնաւարտ աշակերտ մը այսօր չի կրնար յայտնել պոլիւար կրթականը . անշուշտ բացառութիւններ եղած են մինչեւ հիմա : Կրթական այս դժուարութիւնը հարթելու ամենէն կտրուկ և գործնական միջոցը չկա :

Պուկարիոյ ամենէն հայաշատ քաղաքներուն մէջ կազմել մարմիններ , որք բազկացած ըլլան կրթական գործի տեղեակ անձերէ . այս մարմիններու մէջ յարաբերութիւն հաստատել և միահամուռ խորհրդակցութեամբ պատրաստել միօրինակ ու կանոնաւոր ծրագիր մը և անոր կիրարկութեան անհրաժեշտ միջոցները . յետոյ պաշտօնապէս դիմել կառավարութեան , անոր վաւերացնել տալ այդ ծրագիրը և գործադրութեան դնել զայն :

Կրթական այս վերին մարմին միշտ մտէն կը հսկէ այս կերպ կարգադրուած կրթարաններու ընթացքին և կանոնաւոր ուղղութեանը վրայ :

Արդարեւ զարմանալի է որ մինչեւ ցարդ այսքան դիւրին , նպատակայարմար և փրկարար միջոց մը չէ իրականացեր , ու Պուկարիոյ հայը , մանաւանդ նոր սերունդը մնացիւր է անորոշ , աննախաձեռն և անշուք վիճակի մը մէջ :

ՎԵՐՋ Ե :

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՄՆԵՐ

ՅՈՒՐԵՔԵՊԱՐԱՒԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼՈՒՄ

Սարգս , 28 Յուլիս

Վանի Ազգային գաւառից բարեր հասան որ այնտեղ (տաճիկ պարսկական սահմանի վրայ) քրդերի նոր շարժմանց դէմ կռուել են մի քանի հարիւր հայեր . ընդհանրապէս նկատուած են շատ կատարի կերպով . Պաշկապէից օգնութեան են հասել բազմաթիւ քրդեր և տաճիկական կանոնաւոր զինուորներ , բացի պատգամաւոր զինուորներից : Կռիւր սկսում է ամսոյս 25 ի գիշեր և տեւում է յաջորդ օր ամբողջ մինչեւ կը

միմանայ : Հայերը յաջողել են սպանել համարիւթ քրդի Շարաֆ փաշան , որ անցեալ կոտորածներին վանի ամբողջ գաւառի մէջ դեր խաղացողն էր և նա էր որ վանի գաւառից փախած 800 փախստական երիտասարդներին կոտորեց , թող այն բարբարոսութիւնները , որ բոլոր գաւառներում ի գործ դրեց . ահա այսօր նա իւր արժանի պատիժ կընդունի , ընտելի զառնալով իւր բոլոր ցեղով , սրից և ոչ մէկ հոգի ազատուց , մօտ 250 . օպաններ (վրաններ) խորտակվում և բոլոր տուն տեղ տիրոջ գլխուն քանդում են . պանդուկ են թուրք կանոնաւոր զինուորներ . ոմանց յաջողուել է փախել : Շարաֆ փաշային բոլորովին մաս մաս են արել : Թշնամու ֆեսալ 600 ի են հասցնում : Կռուի մէջ փչացել են բոլոր գոյքեր , ձի ոչխար տաւար սպանուած գետին են ծածկեր : Ամէն կողմաւոր տեղն է մնացել , ազատուել են այն երեխաներ և կիներ , որոնք գնդակի չէին հանդիպել : Հայերը վրաններում հասած ատեն մեծ զգուշութիւն էին անում որ ոչ մի երեխայ և կին չկոտորուի և չջխասուի : Արդէն բոլոր բան պրծել էր երբ յարձակողները վրաններն են հասնում . կոտորածից յետոյ ամբողջ գաղտն հայերի ձեռքն է մնում : Թաշորդ գիշերը անհետ կը լինին անկից . վրաններն արդէն այրել են և մնացած գոյքերը տեղն ու տեղ կը մնան : Հայերից մեռածներ և վիրաւորածներ 10 հոգի էին : Հանդարտեցաւ Աղբակի սար ու ձոր և վանի վիլայէթ այդ արիւնշարուն գաղանից , այդ « Սուլթան Համիդի սիրելիից » , որ անցեալ կոտորածների փոխարէն արժանացած էր պատուանշանների : Հայերը վերցրել են այդ շքանշանները , սուլթանական թուրը և համիդիական հըրովարտակներ , որոց վրայ գրած են սուլթանի հրամանները : Թուրք պարսկական սահմանների հեռագրական թեւեր կտրած են : Կոտորածի ժամանակ քրդեր գալիս օգնութիւն են խնդրում պարսիկներից , նրանք հակառակ պատասխան են տալիս . տաճիկ հիւպատոսն եւս շատ լնդիւրքներ անկուց յետոյ պարսիկ կառավարութիւնը նրան պատասխանում է թէ՛ բանի տարի է անընդհատ կոտորում էք հայերին , այս անգամ էլ հայեր թող կոտորեն : Այժմ տաճիկ պարսկական սահմանի վրայ այլ եւս քրդեր չկան . դէպ Վան ընդհանուր ստրասի է տիրում բոլոր քրդերի վրայ . հետեւանք չգիտեմ : Մանրամասնութիւնները յետոյ :

(Արձագանք) Զաւարթ

ԽԱՍԹԱԼԸՔ ԹԻԻՐԻ ԱՍԲԵՐԼԵՐԻՆՏԷ

— — —

Թէսալիատան ալընան հավատարմէրէ կէօրէ , օրատա պուլընան թիւրք օրտուսընտա պիր գաշ նէվ թէհլիքէլի խասթալըզար զուհուրա կէլմիշ վէ օրտուսըն ումումէն սըհհէթի թէհլիքէտէ իմիշ , պու սէպէպտէն ասքէլէր պիր գաշ նօգթալարա տաղըտըմագտա օլուպ , անլէրտէն 10000 քիշի վօլօյա եօլլանըմըշ . Պարսալա , վէլէսթիւնօ , վօլօ վէ Լարիսա խասթալանէլէրի խընճախընճ խասթալարլէ տօլմուշ տըր :

Պու խասթալըզարըն զուհուրը միւթէատիտ սէպէպէրտէն վէ խուսուսի սէնէնին շու մէվսիմիտէ՛ թէսալիանըն էքսէր ճի . հէթիւտէ պուլընան պաթաղըզարըն ֆէնա գօգուլարընտան վէ պիրաղտա թիւրքլէրին բիւլիկինտէն իլէրի կէլմիշ տիր :

Եունան կաղէթալըրը խասթալարըն մըգտարը 20000 տէն զիյա տէ կէօսթէրիօլլար . վէ պու խասթալարըն 3-4 պիւնի կէչէն հաֆթա Սէլանիքէ վէ Սթանպօլա եօլլանըմըշ օլտըղընը եպլըյօլլար : Սթանպօլ կաղէթալարը տալիս՝ կէչէն կիւն թէսալիատան 750 խասթա ասքէր Սթանպօլա նաղլ օլընմըշ օլտըղընը պիւտիբիւլէրի տիր :

Պու սըրա խարիճիյէ նալըրը թէվֆիդ բաշանըն ահմանմէնին իգմալը իչիւն աճէլէ իթմէսինին պիր սէպէպի տալիս պու խասթալըզ օլաճագ տըր , եանի միւսալէհէի իմպա ալթընա ալուպ տէ կիւն էվլէլ թէսալիատան ասքէրլէրի տաղըտմագ վէ օ եօլլէ եէվմիյէ 10000 լիւրա մէսարիֆտէն վէ խասթալըզտան գուրթուլմագ : Ֆազալթ միւսալէհէն ահտնամէսի մէսէլէսինտէ տէվլէթլէրին իթիֆագաղըղը խալլը պիր վագըթ իչիւն տահա թիւրքլէրի թէսալիատա թուլթաճագ վէ թիւրքիւլալ մէսարիֆաթը ասքէրիյէ ալթընտա չիւրիւտէճէք տիր . էկէր էվրոբա թիւրքլէրի էվմէք իչիւն պու թարիգի թուլթաթը իսէ բէք կիւղէլ եօլտըր , պու սէպէպլէ թարի օլտն խասթալըզարա գուրպան կիտէն ասքէրլէր տէ թիւրք հիւքիւմէթիւնին գըրտըրտըղը էրմէնիլէրին տէֆիթէրինէ գայտ օլընըլլար , ֆէնա՛ մը : Ինսանիյէթ նօգթալի նաղալլէ պիղ եինէ թէհսիւֆիտէրիլ իսէ տէ հիւքմի տալէլթտէ պիր տէրէճէ եէրինի պուլմուշ օլուր :

Շու սըրա էըլտըր քաւաղալըր շալլըմըշ պիր հալտէ պուլընըյօր . զիրա Սուլթան ուղուն պիր միւստէլթ ասքէրլէրինի թէսալիատան չըգարմամագ իտտասընտա ըտը . Ֆազալթ պիլ ալիւրէ տէվլէթլէ՛

ընդհանուր՝ անը թէսաւիայը
թէքը իթմէքէ վէ թազմինաթը
հարպիյէ իշին տէ հալընը
4,000,000 լիրա աւազա՝ մէզպուր
իթմի . իմտի մէզպուրը մէզպուրը
նէ հալընէ աւազիլէնէ կինէ տայիր
այլարճա միւզաքքէրէլէր ճէրեան
իթմէքտէ վէ հէր կին իշին
եէնի հէնի միւզքիլաթա թէսա-
տիւֆ օլընմազտա տըր , շէօյլէքի
աւազալը բարա պիր թարաֆ-
տան մէսարիֆաթը ասքէրիյէյէ
չիւրիւմէքտէ , տիկէր թարաֆտան
տախի իսսթալըզա պիւլէրճէ
Մէհմէտճէլքէր գուրպան կիթմէք-
տէ տիրէր , բիմ պիւլիւր մէզքիւր
4,000,000 լիրալըտա Եունանիս-
թան նասըլ էօտէյէնէք տիր :
Հէր հարտէ Սուլթան պու կին
թէսաւիատան չըգմազ արգու ի-
տէնէք իսէտէ , պիր թարաֆտան
մէզքիւր մէզպուրը թէհիլէքէյէ
գօյմուշ օլաճազ վէ տիկէր թա-
րաֆտան պօշ էլ իլէ օրատան չըգ-
մազ մաղրուրիյէթինէ թօգանա-
ճազ տըր :

ՊՈՒԿԻՆՔԻ ԹԵԼԵԿՐԱՖԼԱՐ

(Առանց Պալգանիք)

Աթինա , 22 Օգոստ.
Գուրու իւզիւմ պիւտճէսինին
2/12 թէնզիլի գապուլ օլընտըգ-
տան սօնրա մէճիլի մէզպուրան
գաբանտը : Վիքէլա բէյիսի Մ.
Բալինին թէքիլի իւզէրինէ , հիւ-
քիւմէթ բուլ վէ թիւթիւն վարի-
րիտաթը թազմինաթը հարպիյէյէ
թախսիս իթմէկէ բալը օլտու .
պու իքի վարիտաթտան պիրինի
գապուլ իթմէք տէվլէթէրին բէ-
յինէ իհալէ օլընմըշ տըր :

Վարչալա , 22 Օգոստ.
Չար՝ Վարչալանըն պէլէտիյէ
բէյիսինէ ճէվապէն , մէսրուրիյէ-
թինի վէ իլք տէֆա օլարազ՝ իմ
բէրաթօրիցա իլէ պէրապէր պիր
միւտտէթ վարչալատա գալաճա-
ղընը վէ հալինին սատագաթըն-
տան տօլայը մէհմուռիյէթինի պէ-
յան իթմի :

Աթինա , 22 Օգոստ.
Հիւքիւմէթ տէվլէթէրէ պիր
նօթա հօլլայուպ , Բանէս նէհրին ,
Կանէցա վէ Գուրալէրի ճիւլարըն-
տա պաղը նօթթալարը թիւրքէր-
տէն զապթ օլընմըշ օլտըղընտան
տօլայը բրօթէսթ իթմի , զիրա
օլ սէպէպտէն մէզքիւր նէհրին սա-
հիլէրինտէ Եունանի հիւքիւմէթի-
նին թէհիլի գըրըլաճազ ըմըշ :

Սթանպուլ , 20 Օգոստ.
Սուլթանըն եէվմի ճիւլուսը մի-
նասիպէթէլէ իթհէմ բաշանըն չէք-
տիկի թէլէկրաֆա ճէվապէն , Սուլ-
թան պիր թէլէկրաֆէ՝ ճիւլուսը
կիւնինտէն՝ Եունի 20 սէնէտէն
պէրու պու կինքի գատար պախ-

թիյար օլտմաթը օլտըղընը վէ
ասքէրիլինին սէճաթթի իլէ հո-
սուլա կէյէն մուզաֆաթը իթմէն
տօլայը մէհմուռիյէթինի պէյան
իթմիլ տիր :

Րուսիա թմրիգի Սուլթանա թէպ-
րիգէ կիթմի վէ Սուլթան տնո-
Մուրաթա Օսմանիյէ նիշանը
վէրտի :

Աթինա , 22 Օգոստ.
Եունանիսթանըն մալիյէսի ցօնր-
ալ ալթընա ալմազ իշին վէ էս-
քի պօրճլարընտան տօլայը Ալմա-
նիսթան իտտաաթը Եունանիլըր-
տա ֆէնա թէհիսի հուսուլա կէ-
թիւրտի :

Էլան Ալմանիա՝ թազմինաթը
հարպիյէ մէսէլէսինէ իշթիւրաք
իթմէք իսթմէլէպա , էն էվլէլ
պալատէ մէզքիւր մէսէլէլէրին
հալընը իտտաա իթմէքտէ տիր :
Ալմանիա էլիսի պու կին Մ.
Բալին իլէ կէօրիւշտի վէ պիւլիսէ-
րէ տիկէր էլիլէրէլ Գրալըն հու-
լուրանա չըգտը :

ԻՏԱՄ ՃԵՉԱՍԸ

Սթանպուլ սօն վուգուաթընտան
տօլայը տէրտէսթ օլընան 10 էր-
մէնիլէրին մուհաքքէմէսի Սթան-
պուլ ճիւնայէթ մահքէմէսինտէ լէնճ-
չէնպիհ կինիլ իճրա օլընտը :

Մաղնուշարըն էսամիսի
Միսաք Գալիսէրիլի՝ Պապը Ա-
լիյէ պօնպա աթմասընտան տօլայը
մաղնուռն :

Կարապետ վէ թէքիլտալը Ար-
տաշէս , Ղալաթա սէրայընա պօն-
պա աթմաք թէչէպիւսինտէն տօ-
լայը մաղնուռն :

Քէզա պանգատա թուլթըլան պիր
էրմէնի :

Գօմիթէյէ ալա պուլընմազ մաղ-
նուռիյէթի իլէ Միհրգատ , Սար-
գիս , Լեւոն վէ տիկէր Արտաշէս
վէ սայիրէ հուգուրը մահքէմէտէ
պուլընմըշար տըր :

Պու մաղնուշարըն միւտաֆատաթը
իշին էքի թիւրք վէքիլէր վէ
Չօհրապ վէ Սթանպուլիսն էֆէն-
տիլէր միւտաֆատա վէքիլի թային
օլընմըշար տըր :

Մուհաքքէմէսին նէ հօլտա ճէր-
եան իթմիլ օլմասընա տայիր
թաֆսիլաթ ալընմաթը իսէտէ ,
խուսուսի պիր մէքթուպէ կէօրէ ,
պալատէ մէզքիւր 10 մաղնուշար-
տան սէքիլի իտամա մահքիւմ
օլմուշ վէ իքիսի պէրաթ իթմիլ
տիր :

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Հօնտրա կազէթալարըն Սթան-
պուլտան ալտըղարըն թէլէկրաֆա-
րա նաղարէն , Սէր գօմիսէր Շա-
քիր բաշա Պապը Ալիյէ պիր թէ-
լէկրաֆ քէչիտէ իտուպ , Սըվազտա
հալ թէհիլէքի օլտըղընը վէ էր-
մէնիլէրին ըսեանա զըյամ իտէ :

ճէքէրինտէն գօրգուլտըղընը պիւ-
տիրիլ տիր :

Սուլթան Պատրիարք Օրման-
եանա պիրինճի Օսմանիյէ վէ Ֆր-
րէնկեան Աբրահամ էֆէնտիյէ ի-
քինճի Օսմանիյէ նիշանարը վէր-
միլ օլտըղը Սթանպուլ կազէթա-
լարընտա օգուռմուշ տըր :

Բարիստէ 150 քիշի էլիլէ սէ-
րայը էօնիւնտէ՝ Ալմանիա իմրէ-
րաթօրընա գարըն պիր նիւմայիլ
իճրա իթմիլէր . ժանտարարանիլ-
րի տաղըտտըլար : Տիկէր պիր թէ-
լէկրաֆա կէօրէ , մէզքիւր նիւմա-
յիլ Ալմանիա սէֆարէթհանէսինէ
գարըն օլմուշ վէ 10 քիշի տէր-
տէպթ օլընմըշ . պու գարընըզըզ-
տա 4 քիշի տախի եարալանմըշ
տըր :

Չար վէ Չարիցա հաղարաթը
օգոստոս 20տէ վարչալիայա (Բօ-
լոնեա Բաթիսթիլ) կիթմիլէր վէ
օրատա պիր միւտտէթ գալաճազ-
լար տըր :

Պիր գալ կինտէն պէրու Սուլ-
թանա միսաֆիր պուլընան Աֆղա-
նիսթանը պիր գաթ՝ մայէթինտէ
պուլընան 22 քիշի իլէ Սթան-
պուլտան միւֆարէզաթ իթմի .
Սուլթան մէրգուլ՝ զաթ վասիթա-
սը իլէ Աֆղանիսթան էմիրինէ
պիր խուսուսի մէքթուպ վէ հէտի-
յէլէր հօլալմըշ տըր :

Բօլիքիլէ Գօրէնուրօնէնին Ա-
թինատան ալտըղը մալիւմաթա
կէօրէ , Աթինա պանգալարը թազ-
մինաթը հարպիյէնին էօտէնմէսի-
նէ մուալէնէթտէ պուլընաճաղար .
թազմինաթըն զըսմը ալալմը հիւ-
քիւմէթին վարիտաթը իլէ էօտէ-
նէնէք տիր :

Սրանտարտըն պէյանընա կէօ-
րէ , Եունանիսթան՝ տէվլէթէրէ
ճէվապէն ալթը միլիոնա մուզա-
պիլ պիր վարիտաթ անլէրին նէ-
զարէթինէ իհալէ իտէնէկինի պիւ-
տիրիլ տիր :

Պու հասըլաթտա 11,000,000
տարաթա մուզապիլ օլան բուլ վա-
րիտաթը տախի պուլընուպ , անը
ցօնրթօլ իթմէք իշին տէվլէթէր
թարաֆընտան զիր միւհըր մալ-
սուսլէ բուլար միւհիւրէնէնէք
տիր :

Սրանտարտըն Սթանպուլտան ալ-
տըղը մալիւմաթա նաղարէն , խա-
րիճտէն Սթանպուլա կիտէն վէ պէ-
րապէր ֆամիլեաթը օլմայան էր-
մէնիլէր հէր քիմ օլուր իսէ օլտուռն
Բաթրիգհանէի քէֆիլ վէրմէլէր
իսէ , Սթանպուլա գապուլ օլընմա-
յաճաղար ըմըշ :

Ֆրանսա ճիւհուրիյէթ բէյիսի
Մ. Ֆէլիքս Ֆօրըն իուսիայա ա-
ղիմէթի մինասիպէթի իլէ՝ ասքէ-
րիյէ վէ բօլիթիգա մահքիւմէր ի-
շին Ֆրանսատա աֆիլը ումումի
իտան օլընաճազ ըմըշ :

ՉԱՍԻՐԷ ԲԻՍՅԱՍԸ

Վառնա 28 Օգոստոս

ԷՍԻԻ ՄԱՀՍՈՒԼ

Պալգան

Վալօն , Եօգ

Արապա , լիպրա 55-59 , հէքթօլ .
12-14 ֆրանք

Կիւնտէ հալընը 5-6 արապա
ինմէքտէ տիր :

Եէնի մահսուլտան կիւնտէ 60-70
արապա պուլտայ վէ 10-15 արա-
պա արբա ինմէքտէ տիր : Պուլ-
տայ լիպրալը՝ 47-54 , ֆիլյաթ՝
7-12.40 ֆրանք . արբա լիպրալը
38տէն 41 , ֆիլյաթ 4.80-5.30 :

Օլան մուամէլէ էհէմիլիէթսիլ
վէ բիացա գալի տիր :

Նարօլէոն 20,60 ֆո. հիսապը իլէ
կիւնտէ 7-8 արապա ֆասուլեա
կէլմէքտէ վէ մալա կէօրէ 100
օգգասը 19-24 ֆրանքա գատար
սաթըլմազտա տըր :

ԱՐԾՐՈՒՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Վառնայի կրթական ընդհ. տես-
չութեան կողմէ Արծրունեան վար-
ժարանի Հիմնադիր-Տեսչին զըր-
կուած պաշտօնագիր մը կը ծա-
նուցանէ թէ վարժարանը վառե-
րացուած է Տեսչին տուած ծրա-
գրական բացատրութեան համե-
մատ :

Վարժարանի դասախօսութիւն-
ները պիտի սկսին յառաջիկայ եր-
կուշաբթի 25 Օգոստոս :

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՇԽԱՆԵԱՆ

Յանձնակատար Ի Շուշյա

Կը ծանուցանէ Արգոյ հասարա-
կութեան թէ ով որ ապրանաջ փո-
խադրութեան և առեւտրական ու-
րիլ յանձնարարութեանց համար
իրեն դիմէ , ըստ ամենայնի գոհ
պիտի մնայ , Հասցէ՝

А. Ишханиянъ
комисонеръ-экспедиторъ
Шумень.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՏՈՒՆ

Ա. ՉԱՐԲԱՆԵԼԵԱՆԻ

Ապսխրաւիսն մզկիթի դիմաց Ի Վառնա

Կը վաճառուին գատաղքեր . զպրոց-
ներու համար գեղջ : Ուրիշ քաղաքներէ
եկած յանձնարարութեան փութով կը
կատարուին եւ փոխարէն կընդունուին
նամակադրոյմներ : Գնում եւ վաճառում
գործածուած նամակադրոյմներու (բուլ) :

ԱՁԴ

1897 սեպտեմբեր 1էն սկսեալ վար-
ձու պիտի տրուին Հաճի Բանաթօ Գա-
րապաթաքի գինեւորներ եւ պարտէզը ,
որ կը գտնուին Վառնայի երգ թաղը ,
թիւ 5 , ծովեզերեայ պարտէզին դի-
մացը :

Վարձի փափագողները մանրամաս-
նութեանց համար կը հրաւիրուին դի-
մել կալուածատիրոջ , զբաւոր կամ
բերանացի , առ

ՀԱՅԻ ԲԱՆԱԹՕ ԳԱՐԱՊԱԹԱՔ
Վառնա , 25 Յուլիս 1897 5-6